Մի երրորդ արարողութիւն ևս կայ, որ մկրտութեան է նմանվում։ Երբ երեխան ծնվում է նորա համար գտնում են մի կնքաւոր, որին յանձնում են մի ընկոյզ։ Կնքաւորը պարտական է ընկոյզը պահել մինչև երեխի ինքնաճանաչութեան հասակի չափին։ Այն ժամանակ կնքաւորը կժողովէ երեխին, նորա ծնողներին և ազգականներին, կը կոտրէ յանձնուած ընկոյզը կ'ուտացնէ նորանից երեխին և բոլոր ժողովածներին։ Այնուհետև երեխան համարվում է կատարեալ մարդ և այնուհետև միայն իրաւունք ունի արարողական մատաղի բաժանմանը հաղորդակից լինել։

Ուշադրութեան արժնի է Գարա—Գոյունցոց նուիրական սօսի ծառերին կատարած ուխտը։ Այդ ծառի տակին նոքա հաւաքվում են օրերը տօնելու. ճրագ, մոմ են վառում, խունկ են ծխում, մատաղ են անում։ Այդ ուխտատեղիներին նրանք անուանում են «Գարա—օղլան» բառ առ բառ թարգմանութիւնը Վասպուրական Հայերի «Թուխ—մանուկ» բառին։ Հայերի մէջ բացի վանական ուխտատեղիները, կան երկրորդական ուխտատեղիներ. դոքա են քանդուած եկեղեցիների վերայ շինած մատուռները, ժայռերի միջի ծերպերը, ուր ճրագ, մոմ են վառում, խունկ են ծխում։ Ջերմախտի ջրերը, ուր լողանում են ջերմողները. ծառեր, որոնց ոստերի վե-